

առարկայ Հրամանաւ Նորին Օծու թեան մուծաւ յամենայն ուսու մեարանս Հայոց ի Ռուսաստան. բաց յայսմանէ Հրամանաւ Աւհափառ Հայրապետ Կաթողիկոսի տպագրեցան ի Մայր Աթոռոյ տպարանի նախ Գասաղիք ձայնագրեալ արհեստի, և ապա ձայնագրեալ ժամագիրք, երգեցողս թիւնք Ա. Պատարաղի, և ամենայն երգք կամ Շարականք գտեալ ի Ճաշոցի ի Մաշտոցի ձեռնագրութեանց և օրհնութեան Ա. Մեղանի, ևս և Երգարանք Իսկ յանցեալ 1880 ամի Աւհափառ Հայրապետան ըստ իւրում նախնի ազգորութեան նստուցանելով առջի իւր զերկուս քաջ ձայնագրագէտս ինքն երգեաց և ետ ձայնագրել զամենայն քաղուածս օրհնութեանց Շարականաց ամենայն աւուրց ի զիւրութիւն զորաց վասն ժամերգութեան որ համարի լրումն ձայնագրեալ Շարականի որեւ այժմ ընդ մամուլք տպագրութեան գտանիս:

Յայտոտիկ ձայնագրեալ զրեանս թէ՛ ռիքան աշխատութիւն կրեալ է Աւհափառ Հայրապետան, թողում գուշակել գնահատող ողջամիտ ազգայնոց, թէ ռիքան ծախս կրեալ է տպարան Մայր Աթոռոյ ի ձուլել զձայնագիրս և ռիքան մտաւ որ շարժարանս կրեալ են զրաշարք և սրբազրիւք, թողում գուշակել ձայնագրագիրաց և տպարանապետաց, նոյնպէս թողում տպագային գնահատել զմեծագործութիւնս բազմարդիւն Հայրապետին մերոյ, որ անսայթաք հեռեւող լեալ է սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոփայ. զեկեղեցւոյ բարեկարգութիւնս Ե. դարուն նմանեցուցանելով կանոնական Վոնդակօք իւրովք և հանապազօրեայ մատուր և անձնական ծանր աշխատակրութեամբք, Իսկ որք ջանան իբրտւ զճրպն ընդ գրուանաւ դնելով ծածկել ի խաւարի նախանձու զազգաշահ գործն Աւհափառ Հօր մերոյ, թող միանգամ հայեսցին նոքա ի մեծագործութիւնս նորա ի ճեմարանն ասեմ և ի Թանգարանն, որք արտաքին հոյակապ շինուածութն և ներքին բարեկարգութեամբն հոշակն զփառս որպէս մեծագործ հիմնարկն, նոյնպէս և Մայր Աթոռոյս Հայաստանեայց որք և հային ընդհանրապէս յօգուտ ազգիս Հայոց և Եկեղեցւոյ:

Մ. Ե. Ս.

ՓՈՐՁ ԱՄՍԵԿԸՆ ՀԱՆՔԻՍ.

Յաւօք սրտի տեղեկացանք, որ ամսական Փոք պատուական հանդէսը ալ ևս չպէտքէ հրատարակուի, իւր ծախքը լցուցանելու չափով բաժանորդներ չունենալուն պատճառաւ, և թէ Հանգիսի մեծ. խմբագիրը նորա չորս եւ կէս ամեայ գոյութեան ժամանակամիջոցում բացի նորա բաժանորդագներից իւր սեղհակոնութիւնից ևս ծախսել է 14,000 բուբլի:

Ի նկատի առնելով ռուսահայերիս նշանաւոր թիւը և այլ համեմատաբար աւելի յարմար միջոցները՝ չենք կարող չխոստո-

վանել, որ արդարեւ Փարչի նման ազգային, բանասիրական եւ մատենագրական մի հանգիսի չորս եւ կէս ամեայ գոյութիւնից յետոյ 14,000 բուբլի տուգանքով հանդերձ գաղտրման դատապարտուելի մի տխուր երեւոյթ է, որ ապացուցանումէ առհասարակ Հայերիս մէջ ընթերցասիրութեան բացակայութիւնը, ապացուցանումէ, որ Հայերիս ստուար մեծամասնութիւնը մտաւորապէս ապրելու անհրաժեշտ կարիքը զգալու չափով դեռ զարգացած չէ, դեռ նորա բաւականութիւնը սահմանափակուած է նիւթական կեանքի նեղ շրջանի մէջ: Բայց քանի որ ներկայս մի ազգի արժանաւորութիւնը չափումէ նորա աւելի մտաւոր՝ քան նիւթական կեանքի զարգացման չափով, անտարակոյս այս օրինակ անտարբերութեան տխուր երեւոյթները նախադէպ կարող են բերել մեզ Հայերիս, մեզ՝ որ ներկայումս աւելի մեծ կարիք ունենք մեր մտաւոր զարգացմամբը վարկ եւ պատիւ վաստակելու օտար Ազգերից: Աթափենք, սիրելի հայեր, սթափենք անտարբերութեան ամօթալի քնից, եւ սովորենք մեր նիւթական հարստութիւննիս մեր մտաւոր զարգացման եւ յառաջագիմութեան գործին ծառայեցնելու:

Արչափ ցաւ է մեզ Փարչ պատուական հանգիսի՝ մեր անտարբերութեան երեսից դադարումը, նոյնչափ եւս ուրախութիւն է մեզ տեսնել մեր մէջ անձինք, թէ եւ սակաւաթիւ, որոնք գէթ ըսող կարեաց պատրաստ են գնահատել ազգային գործիչների ազգաշահ գրականական վաստակը, եւ որոնք աշխատում են Հայ ժողովրդեան պատիւ չբերող այոպիսի տխուր երեւոյթների առաջն տռնել զանազան միջոցներով, ինչպիսին է Պ. Յ. Գեղամեանցի ձեռք առած միջոցը, յիշեալ հանգիսի կրկին հրատարակութեանը օժանդակելու նպատակաւ Ախալքալակի վիճակում արած կանխիկ բաժանորդագրութիւնը: Այո՛, գովութեան եւ համակրանաց արժանի է թէ Պ. Գեղամեանցի ձեռնարկութիւնը եւ թէ Ախալքալակի վիճակի ազգայնոց ամենայն բարի ձեռնարկութեանց ուրախութեամբ սրտի մասնակցելու ջերմեռանդութիւնը:

Յանկալի էր մեզ, որ ամեն քաղաքաց Հայ հասարակութիւնք եւս հետեւելով Ախալքալակի վիճակի ազգայնոց բարի օրինակին կազմէին իւրեանց մէջ նոյնօրինակ կանխիկ բաժանորդա-

գրութիւններ, որոյ Փռչ պատուական Հանդիսի փոխտնակ տա-
րեկան մի տեարակի՝ կրկին ամօական հրատարակութեանը օ-
ժանդակելով հանգերձ՝ մեծ ծառայութիւն արած կլինին եւ
ազգիս մտաւոր զարգացմանն ու յառաջագիմութեան գործին:

Ս. Վ.

ՃԱՆԱՊԱՐ ՀՈՐԳՈՒԹԻՒՆ ԴԷՊ ՅԱՆԻ.

Յուլիսի անտանելի շոք օրերու մէ կըր մեք ոգևորուած Բագրատու-
նեաց մայրաքաղաքի աներակները տեսնելու վառ ցանկութեամբ՝ կլանք
դէպ ի Երազածի ստորտը: Ճանապարհը զառի վայր էր և տեղ տեղ սա-
րերի վերայ կանգնած էին կիսաւեր եկեղեցիք, որոնք անմահացնում են
Հայ մարդոյ կրօնական ջերմեռանդութեան յիշատակը: Այս եկեղեցիքը
նայումէին մեր երեսին այնպէս տխուր, ինչպէս կնայէ մի մոռացուած ծը-
նող իւր երախտամոռ որդւոց երեսին, որոնք նորա շնորհիւ վայելում են
գոյութեան իրաւունք: Բայց ամառն այսօր կարծես Հայի կրօնական ջեր-
մեռանդութիւնը մեռած է, և ինքնաճանաչութեան ոգին զեռ ևս ծնած չէ
նորա մէջ: Իսկ քանի որ մի ազգ ինքնաճանաչութեան հասած չէ, նորա
գոյութեան նեցուկը նորա եկեղեցին է լեզուի և սովորութիւնների հետ
միացած:

Մինչև Հիւրակայ գաւառը հասնելիս նշանաւոր Հայ գիւղերից պատա-
հեցանք միայն Մաստարայ գիւղին, որ Ապարանայ գաւառակի զլխաւոր
գիւղերից մին է. սորա դիրքը Արարատեան դաշտից բաւական բարձր է:
Այստեղից երկրի յատկութիւնը փոխվումէ դէպի բարբերքը. այստեղից
բարձրանալով անցնումք դէպի Հիւրակայ գաւառը, որը նշանաւոր է
առատ բարբերութեամբ: Հարկաւոր է ասել, որ յառաջ նշանաւոր էր
և հիւրասիրութեամբ, ինչպէս այժմ հային անվայելուչ ժլատութեամբ:
Այս էլ ունի իւր հիմնաւոր պատճառը. երկար խաղաղութիւնը և պա-
տերազմական տարիները զանազան ազգեցութիւն ունեցան ժողովրդի բնա-
ւորութեան, բարոյականութեան, պարապմունքի և սովորութիւնների
վերայ: Առաջ ամեն գիւղացի իւր յառաջագիմութիւնը և երջանկութիւնը
տեսնում էր տոհմն աշխատասիրութեան մէջ. իսկ պատերազմից յետոյ
ժողովուրդը փոխեց իւր կարծիքը. նա տեսաւ որ պատահական դէպքերն
էլ երջանկացնում են մարդոյ և սկսեց որոնել այսպիսի շէնք բաղդաւո-
րութիւններ: Այս է պատճառը, որ այսօր Հայ գիւղացին ամեն մի ճա-
նապարհորդից հարստանալու միջոց է փնտռում: Յուլիսի . . . ի ժամի
ձին երեկոյեան հասանք Բուլղաշէն ասած մի Հայ գիւղ: Այս գիւղի
շրջապայքը Բրդերի բնակութեան տեղեր են, բայց այժմ նոքա բոլորը
ապահովութիւն էին գնացել Արագածի պառթիւ: